ՀԱՆԳԻՍՏ ՀՈԳԻՈՅ Հ. ՊՕՂՈՍ ՔԻԼԻՋԵԱՆԻ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱՆՁԻՆ

ԲԱՐԻ հոգի մը, զուարթածաղիկ դէմքով ու խօսքով, սակայն միշտ խորազգած եւ որոնող միտք, անանց ծաղիկներու և ճշմարտութեան սիրով տուայտող, ո՞վ պիտի գուշակէր թէ այս տարի, Մարտի վերջին օրը, երեկոյեան դէմ անդրաշխարհի ափերէն աւետիս պիտի առնէր յաւերժական գարունի, ու յեղակարծ, ինք թեթեւ ու անմեղ երկինք սլանալով՝ զմեզ պիտի թողուր զրկուած, անմխիթար ու ցաւագին։

Ծնած Հալէպ՝ 1901 Դեկտ. 4ին, Նախախնամութեան նախասիրութիւնն ունեցաւ իր հանդէպ՝ ընտրեալներու փշոտ ճամբէն քալելու մանկութեան օրերէն։ 1915 – 1918 կ. Պոլիս մնաց թրքական «Փոքր սպայ»ներու որբանոցը, ուր իբր տասնապետ՝ շատ սիրուած էր ընկերներէն։ Հոգեկան ծարաւն ու սրբագոյն կեանքի բոցը զինքը մղեցին ի Ս. Ղազար՝ զինադադարին, 1919, աշակերտելու Մխիթարի Ս. Ուխտին։ Պարտականութիւն մ'է յիշել իր առաքինի վարքին մէջ ցոյց տուած ցայտուն երկիւղածութիւնը, և բարեպաշտօն ու նուիրուող հոգին։ 1923ին կ'աւարտէր իր երկրորդական ուսումն ու Նորընծայութեան օրէն – Հոկտ. 21 – մկրտութեան Յովհաննէս անունը Պօղոսի կը փոխէր, այդ Ս. առաքեալն ընտրած որպէս առաջնորդ և գաղափարական իր առաքելական կեանքին և քրիստոսանմանութեան։ Եօթնամեայ շրջանի մը մէջ – 1925–1931 – կատարեց իմաստասիրութեան և աստուածաբանութեան ուսումներու համալսարանական ընթացքը Հռոմի մէջ, մինչ արդէն 1930 Հոկտ. 19ին քահանայ ձեռնադրուած էր վանքիս մէջ։

1931ի աշնան՝ վանքիս աշակերտաց փոխ մեծաւոր կ'ընտրուէր, միանգամայն ուսուցիչ. և տարի մը վերջ, 1932 Յուլիսին, կը զրկուէր Հռոմ՝ մեր համալսարանական ուսանողաց փոխ տեսուչ։ Եւ այդ պաշտօնին վրայ էր որ կնքեց իր մահկանացուն։

Իր դագաղին շուրջ հաւաքուած էին իր դաստիարակ հայրերուն և հոգեկից սաներուն հետ՝ ամբողջ Հռոմի հայ կղերանոցն իր սաներով և Գեր. Աղաճանեան մեծաւորով՝ որ քահանայութեան կարգը կատարեց։ Յուզարկաւորութեան ներկայ էին՝ Հ. Մոմճեան, Գեր. Փէհլիւանեան, Գեր. Տէր-Աբրահամեան, Գեր. Հ. Մ. Հապտիգեան՝ Աբրահայր Մխիթ. Վիեննայի, և նոյնինքն Գերերջ. Հոգեւոր Տէր Աւետիս Կաթողիկոս Պատրիարք Արփիարեան հայրագութ սիրով, ինչպէս բազմութիւն մը բարեկամներու և ծանօթներու, սգակից ըլլալով Ուխտիս հայրերուն՝ այդ ցաւալի կորուստին վրայ։

Եթէ գործնական եւ առաքելական արդիւնաշատ ասպարէզ մը չունեցաւ հանգուցեալը, և իր ուսման ծարաւով՝ Նախնեաց ու Ս. Գրքի ուսումնասիրութեանց ծրագիրներն առ յաւէտ ծրագիր պիտի մնան, բայց կը թողու իր փորձառու և հասուն մտքի պատկերը, որով կը տեսնէր ու կը թափանցէր իր ընկերներու սիրտը, որոնց սիրելի էր և օրինակ։ Ժպիտին տակ՝ կրող և նուիրուող սիրտ, առանց բնաւ ընկճուելու։ Ձիգը Ս. Պօղոսի նմանելու նոյնքան արի և ճշմարտասէր կ'ընէր զինքը, սովոր էր ըսել. «Երբէք թոյլ չտանք որ չարութիւնը բարութեան վրայ պարծի և յաղթանակէ. տիկա մեծ նախատինք մը պիտի ըլլար մեզի՝ որ սրբութեան պաշտօնեայ ենք և ճշմարտութեան պաշտպաններ», ինչպէս այլուր կը գրէր. «Ո՛չ, լեզուս պէտք է որ ճշմարիտը, սուրբը, արդարը և կատարեալը խօսի, և չթողու որ, ինչպէս սովորութիւն է, չարը իբրեւ բարի զամէնքը խաբէ. ճշմարտութիւնը մէկ է»։

Գնա՛ անձկալի հոգեակ և վայելէ ճշմարտութեան բոլոր գաղտնիքն և գեղը, և յիշէ երանութեանդ ծոցէն երկրիս վրայ տառապող եւ քեզ շատ սիրող հոգիները։

ՀՈԳԵԿԻՑ ՄԸ



Հ. ՊՕՂՈՍ ՔԻԼԻՋԵԱՆ

Ծն. Հալէպ, 4 – 12 – 1901 † Հռոմ, 31 – 3 – 1933

ՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀՍԽՀ-ՍՍՀ Ա. Մասեռեանի անվան

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

Շիրվանզադէ. — ՔԱՌՍ. *վէպ.* (Ա–Բ–Գ *մաս*). Պետհրատ. Երեւան. (Պետհրատի Դ. տպարան Լենինականում). 8⁰, էջ 432, *գինը՝* 2 Ռ. 50 կ։ — ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ. *հատ.* Զ. (1. *Մկրանիա.* – 2. *Եւզինեի.* – 3. *Նատուշ.* – 4. *Աւերակների վրայ.* – 5. *Կործանուածը.* – 6. *Արմենուհի*) 8⁰, էջ 441, *գինը՝* 4 Ռ. (27½ *մ.*)։ — ՀԱԼԱՔԱԾՈՒ ՓՈՔՐԻԿ ԵՐԿԵՐԻ. *հրատ.* «Հերմէս» Երեւան. 1930, 16⁰, էջ 156, *գինը՝* 1 Ռ. 30 կ.

Դեմիրճեան Գերենիկ. — ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ. *հատ.* Ա. (*Պատմուածքներ*). Պետհրատ, Երեւան, 1931. 8⁰, էջ 452, *գինը՝* 3 Ռ.

Պարոնեան Յակոբ. — ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ. *խմբագրութեամբ* Հ. Ս. Խ. Հ. Գիտութեան և արուեստի Ինստիտուտի. Պետհրատ. Երեւան, 1932։

Ա. *հատ.* (1. *Մեծապատիւ մուրացկանները.* – 2. *Քաղաքավարուհիներ.* – 3. *Խիկարի գուշակութիւնը*). 8⁰, էջ 272, *գինը՝* 4 Ռ. (20 *մ.*)։

Բ. *հատ.* (1. *Պաղտասար Աղբար.* – 2. *Ատամնաբոյժն արեւելեան.* – 3. *Երկու տիրոջ ծառայը.* – 4. *Պռոյդ.* – 5. *Շողոքորթն.* – 6. *Զորս վարագոյրներով կատակերգութիւն մը*). 8⁰, էջ 287, *գինը՝* 4 Ռ.

Գ. *հատ.* *Ազգային ջուրեր*, 8⁰, էջ 268, *գինը՝* 3 Ռ.

Սանտալ Զօրեան. — ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔ. *վէպ.* Պետհրատ. Երեւան, 1932, 8⁰, էջ 185, *գինը՝* 1 Ռ. 80 կ։ — ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ. *հատ.* Ա. — *Նովելներ* (Բ. *լրացրած հրատ*). Պետհրատ. Երեւան, 1931, 8⁰, էջ 318, *գինը՝* 1 Ռ. 50 կ.

Մկրտիչ Արմէն. — ԵՐԵՒԱՆ. *Էպոպէա.* Խ. Ս. Հ. Մ. *ժող. կենտր. հրատ.* Մոսկուա, 1931, 8⁰, էջ 270, *գինը՝* 1 Ռ. 70 կ։ — ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ. *պրակ* Բ. (*Բանուորուհին.* – *Մարմնի ձայնը.* – *Զեմիլաւերը*). 8⁰, էջ 56, *գինը՝* 20 կ.

Ակսել Բակունց. — ՄԹՆԱՁՈՐ (*պատմուածքներ*). Պետհրատ. Երեւան, 1927, 8⁰, էջ 184, *գինը՝* 1 Ռ. 20 կ։ — ՅՈՎՆԱԹԱՆ ՄԱՐՁ. Երեւան. Պետհրատ. 1927, 8⁰, էջ 87, *գինը՝* 50 կ.

Վաղարշակ Նորենց. — ԼԻՐԻԲԱԿԱՆ ՖՐՈՆՏ (*Բանաստեղծութիւնների Գ գիրք*) (1930–1932) Պետհրատ. Երեւան. 8⁰, էջ 102, *գինը՝* 1 Ռ. 25 կ.

Արազի. — ԼՈՅՍԵՐԸ (*պատմուածքներ*) Պետհրատ. 1931 Երեւան, 8⁰, էջ 208, *գինը՝* 1 Ռ.

Նարիրի Զարեան. — ՌՈՒՇԱՆԻ ՔԱՐԱՓԸ (Բ. *վերամշակուած հրատ.*) Պետհրատ. Երեւան, 1932, 8⁰, էջ 152, *գինը՝* 2 Ռ. 25 կ.

Խ. Մատիեան (Մինուշեց). — ԱՐԻՒՆՈՑ ԿԻՐԱԿԻ. *Ինսցենիրովկա* 2 *պատկերով.* Թիֆլիս, 1928, 16⁰, էջ 16, *գինը՝* 25 կ։ — ԳՈՐԾԱԳՈՒԼ (*ինսց.* 3 *պատկերով.*) Թիֆլիս, 1928, 4⁰, էջ 16, *գինը՝* 25 կ։ — ԿԱՐՄԻՐ ԿՏՈՒՑ ԱՐԱԳԻԼ. (*արտատպ.* «*Կարմիր Ծիլեր*»*ից*) Թիֆլիս, 1929, 46, *գինը՝* 40 կ։ — ԿԱՐՄԻՐ ԿՏՈՒՑ ԱՐԱԳԻԼ. (*արտատպ.* «*Կարմիր Ծիլեր*»*ից*) Թիֆլիս, 1929, 16⁰, էջ 16, *գինը՝* 12 կ։ — ՆԱԼՈՏ (*պատմուածք*) Թիֆլիս, 1927, 18⁰, էջ 18, *գինը՝* 10 կ.

Ծերունի Թորգոմեան. — ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ. *հատ.* Բ. *տպ.* Սախելգամի. Թիֆլիս, 1930, 8⁰, էջ 170, *գինը՝* 1 Ռ. 20 կ։ — ԱՂԱՅԻ ՓԼՇՐԷՇՐ (*վէպ*). *տպ.* Սախելգամի, Թիֆլիս, 1930, 8⁰, էջ, 32, *գինը՝* 20 կ. — ՅՈԲՋԱՆԲՈՒՄ (*ընկերոջ յուշատետրից*). Պետհրատ. Երեւան, 1931, 8⁰, էջ 131, *գինը՝* 75 կ.

Միք. Մանուէլեան. — ՍԵՒ ՔԱՂԱՔ (*վէպիկներ*). Պետհրատ. Երեւան, 1927, 8⁰, էջ 126, *գինը՝* 1 Ռ, 20 կ.

Վ. Ատրեան. — ԳՐՈՀՈՒՄ. *վէպ.* Պետհրատ. Սախելգամի, Թիֆլիս, 1932, 8⁰, էջ 246, *գինը՝* 2 Ռ. 20 կ.

Մարգար. — ՏԱՍՆԱՄԵԱՅ ԹՈՌՆԻԿՆԵՐ. *տպ.* Սախելգամի. Թիֆլիս, 1930, 8⁰, էջ 40, *գինը՝* 20 կ.

Ազգան. — ՀԱՅ ՖԱՇԻՍՏՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ ԱՆԴԱՍՏԱՆՈՒՄ (*յօդուածներ*) Պետհրատ. Երեւան, 1932, 8⁰, էջ 87, *գինը՝* 90 կ.

Ռուբ. Աղաբաբ. — ԼԻՐԻԿԱ. Թիֆլիս. 1930, 16⁰, էջ 32, *գինը՝* 15 կ.

Սամուէլեան Խաչիկ. — ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ Ա. *հատ.* ՔԱՐԷ ԴԱՐ. (*պատկերազարդ*). Պետհրատ. Երեւան, 1931, 8⁰, էջ 382 + 38, *գինը՝* 4 Ռ. (27½ *մ.*)։

Երուանդ Շանազիզ. — ՀԻՆ ԵՐԵՒԱՆԸ. *հր.* Ս. Հ. Ս. Խ. Հ. Լուսաժողովական. Գիտութիւնների. Ինստիտուտ. Երեւան, 1931, 8⁰, էջ 264, *գինը՝* 2 Ռ. 50 կ.

Խանոյեան Ս. — ՈՂԱԿՆԵՐ (Խ. Հ. *մասին*). Պետհրատ. 1931, 8⁰, էջ 10, *գինը՝* 60 կ.

Անուշ. — ՇԲՋԱԳԱՐՁԸ (*վիպակ*) Պետհրատ. Երեւան, 1931, 8⁰, էջ 86, *գինը՝* 30 կ.

Մարտին. — ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ. Պետհրատ. Երեւան, 1933, 8⁰, էջ 100, *գինը՝* 50 կ.

Թուումանեան Յովհաննէս. — ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ. *Ժող. հրատ.* 1926. էջ 336, *գինը՝* 1 Ռ. 75 կ.

Սայաթ Նովա. — ՀԱՅԵՐԷՆ ԽԱՂԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ. (46 *խաղ* Գ. *Ախվերդեանի հրատարակութիւնից.* – 8⁰, *խաղ* Գ. *Աստուրի յայտաբերածից.* 6 *խաղ զանազան աղբիւրներից*). Պետհրատ. Երեւան, 1931 – ՌՋԼԱ. էջ 196. *գինը՝* 4 Ռ. (*Ներածական տեսութեամբ, ծանօթութիւններով, բառարանով և խմբ.* Գ. Լեւոնեանի։ Առաջաբան – *յօդուած Պօղոս Մակինցեանի*)։

ՕՐԱՑՈՑՑ – Ս. Էջմիածնի – 1933. *տպ.* Պետհրատի. Երեւան, 1933. *գինը՝* 3 Ռ.

digitised by A.R.A.R.@

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ - ՎԵՆԵՏԻԿ

ԱՐԱԳ ԵՒ ԱՆԹԵՐԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՏՋԵԼԻ ԳԻՆԵՐ

Տպարանս կը ստանձնէ ամէն տեսակ հրատարակութիւն Հայ և Եւրոպական լեզուներով, ինչպէս նաեւ ՎԱՃԱՌԱԿԱՆ ԹՈՒՂԹԵՐ – ԴԱՄԱԿԱՆԻ – ԴԱՄԱԿԱԹԵՐԱՐ – ՔԱՐՏԵՐ՝ ԳՈՒՆԱՏԻՊ ԵՒ ՊԱՐԶ – ԱՅՑԵՏՈՄՍԵՐ – ՊԻՏԱԿՆԵՐ և այլն, և այլն:

IMPRIMERIE ARMÉNIENNE

St. Lazare VENISE (Italie)

ԲՈԼՈՐ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՊԱԼԱՏ

Հ. Ս. Խ. Հ. Պետական Գրապալատը այն օրգանն է որ կատարում է Հ. Ս. Խ. Հ. սահմաններում տպագրուած բոլոր հրատարակութիւնների, գրքերի, բրոշիւրների, պարբերականների, թերթերի եւն. բիբլիոգրաֆիկ մշակումը:

Հ. Ս. Խ. Հ. Պետգրապալատը միաժամանակ գրաղւում է Միջազգային հրատարակութիւնների փոխանակութեամբ, և այդ ճանապարհով աշխատում է հոխացնել Խորհրդային Հայաստանի գրադարանները օտար գրականութեամբ, սպասարկել գիտական, մասնագիտական և Լուսաւորութեան Ֆոնտի աշխատակիցների հայերէն և օտար գրականութեան պահանջներին:

Հ. Ս. Խ. Հ. Պետգրապալատը իր տրամադրութեան տակ ունի հայերէն և ռուսերէն հին ու նոր հրատարակութիւնների ճոխ մթերք, որ կազմում է փոխանակութեան ֆոնտը: Մասնաւորապէս ուշագրաւ է հայագիտական գրականութիւնը, Լիմենեան ազգագրական ժողովածու Հայոց պատմութեան, Ղուկասեան մատենադարանի հրատարակութիւններ եւն. եւն. եւն.:

Հ. Ս. Խ. Հ. Պետական Գրապալատը ուղարկում է նաեւ Խորհրդային Հայաստանում և Միութեան սահմաններում լոյս տեսած բոլոր հրատարակութիւնները:

Հ. Ս. Խ. Հ. Գրապալատը խնդրում է բոլոր հայ հեղինակներից, գրավաճառներից և գրասէրներից իրենց հրատարակութիւններից 2ական օրինակ ուղարկել Գրապալատին, ամբողջացնելու համար գաղութահայ գրականութիւնը: Ուղարկուած բոլոր գրքերի փոխարէն պահանջեցէք համապատասխան արժէքով գրականութիւն:

Գաղութահայ գրական և գիտական լուսաւորութեան աշխատակիցները իրենց գտնուած քաղաքների պետական գրադարաններից թող պահանջեն մեր գրականութիւնը և նրանց մէջեն, մասնաւորապէս օտար արեւելագիտական հաստատութիւններին ու գրադարաններին կապ պահպանելու մեզ հետ և պահանջելու մեր հայագիտական և ընթացիկ գրականութիւնը:

Պահանջեցէք Գրապալատի օրգան «Տպագրութեան տարեգիր»ը, որ ցոյց է տալիս Խ. Հայաստանում ամբողջ տարում լոյս տեսած գրքերը, թերթերը, օրագիրները և յօդուածները:

Ամէն գրութիւն և առաքում ուղղել հետեւեալ հասցէին.

Հ. Ս. Խ. Հ. Պետական Գրապալատ, Երեւան, Կուլտուրայի տուն:

PALAIS du LIVRE
ERIVAN
U.R.S.S.

Բաժանորդագրուեցէք և ծաւալեցէք Հայ մամուլի երիցագոյն ներկայացուցիչը «ԲԱԶՄԱՎԷՊ»ը, վստահ ըլլալով որ մեծապէս պիտի նպաստէք հայ լեզուի և գրականութեան սրբազան դատին, հայ ցեղի անաղարտ պահպանութեան և յաւերժացումին:

Բաժնեգինն է՝ տարեկան Տոլար 3.50 — Կրթ. հաստատութեանց համար Տոլար 1.75

digitised by A.R.A.R.@